«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՊՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

-

ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Սևանի Խ.Աբովյանի անվան ավագ դպրոց
ՂԵԿԱՎԱՐ՝	Արմինե Ղազարյան
ՈՒՍՈՒՑԻՉ	Լիաննա Մկրտչյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն ---------- 2

Ներածություն ---------- 3

ԳԼՈՒԽ I :Շարադրություն գրելու մեթոդիկա---------- 5

1.1 Գաղափար շարադրության մասին---------- 5

1.2Շարադրության տեսակները ---------- 6

ԳԼՈՒԽ II:Փոխադրություն գրելու մեթոդիկա---------- ---------- 16

2.1Գաղափար փոխադրության մասին---------- 16

2.2Փոխադրության տեսակները---------- 16

ԳԼՈՒԽ III:Շարադրության և փոխադրության ստուգումն ու քննարկումը --- 22

ԳԼՈՒԽ IV:Գնահատումն աշակերտների գրավոր խոսքի

զարգացման գործընթացում- ---------- 23

Եզրակացություն---------- 25

Օգտագործված գրականության ցանկ----------26

Ներածություն

Ուսումնառության ամբողջ ընթացքում օգտագործվող գրավոր տեքստերն ունեն նախ՝ ուսուցողական, ապա՝ ստուգողական նպատակ:

Տեքստերը բաժանվում են երկու խմբի՝ մանկավարժական գրականություն և սովորողի ինքնուրույն աշխատանք:

Ուսուցումը, որ նպատակ ունի պատանի ու երիտասարդ սերնդին նախապատրաստելու աշխատանքային գործունեության, կյանք մտնելու՝ տալով նրան աշխարհի ու մարդկանց մասին որոշակի ծավալով գիտելիքներ, դատողական կարողություններ և բարոյական դատողություններ, իրագործվում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր եղանակով:Ցածր դասարանից ՝ աշակերտները տարբեր առարկաներից կատարում են գրավոր աշխտանքներ. Լուծում են խնդիրներ, արտագրում են տեքստեր, գրում թելադրություններ, փոխադրություններ, թեմատիկ և ստեղծագործական շարադրություններ և այլն, որոնք ստուգվում են ուսուցիչների կողմից:

Այս և մնացած բոլոր գրավոր հանձնարարությունները նպատակ ունեն ամրապնդելու սովորողների՝ լսելով ու կարդալով յուրացրած գիտելիքները, ապա զարգացնելու նրանց գրավոր ու բանավոր խոսքը, կազմակերպելու մտածողությունը, սովորեցնելու ճիշտ , գրագետ, հստակ ու գեղեցիկ արտահայտվել մայրենի լեզվով:

Հետազոտական աշխատանքում քննարկվում են շարադրությունների և փոխադրությունների տեսակները, դրանց մշակման, գրավոր աշխատանքներում եղած սխալների ուղղման ու հաղթահարման բազմաթիվ հարցեր:Շարադրությունն ու փոխադրությունը մարդու խոհերի ու հույզերի ամենավառ ու հոգեխոս արտահայտությունն են:Մեր ցանկությունն է նրանց ուսուցումը ներկայացնել այնպես, որ իսկապես դառնա աշակերտի հոգու թարգմանը, օգնի նրա՝ մարդքաղաքացու լավագույն հատկանիշների ձևավորմանը:

Շարադրության և փոխադրության ուսուցումը բոլորովին էլ անջրպետված չէ մայրենի լեզվի ողջ դասընթացից:Մասնավորապես շարադրության ուսուցումը սկսվում է տակավին առաջին դասարանցու մայրենիի առաջին թոթովանքից և շարունակվում բոլոր դասերին:

Մեր խնդիրը պետք է լինի յուրաքանչյուր աշակերտի հմտացնել բառը տեղին օգտագործելու մեջ, որը պահանջում է բառապաշարը հարստացնելու համառ աշխատանք:Աշակերտի մտքի առջև պետք է բաց անել մեր լեզվի անգնահատելի գանձերը, ցույց տալ, թե ամենանրբին մտքերն ու զգացմունքներն արատահայտելու համար ինչպիսի անսահման հնարավորություններ ունի այն, թե որքան հարուստ է, ճկուն ու գեղեցիկ:

Ներկա աշխատանքում փորձել եմ ներկայացնել աշակերտի գրավոր խոսքի ուսուցման մեթոդիկան՝ հույժ գիտակցելով այս կարևոր խնդրի օգտակարությունը վերափոխման շեմին գտնվող դպրոցի առաջ ծառացած ուսումնադաստիարակչական խնդիրների իրագործման հարցում:

Հետազոտական աշխատանքի տեսական նյութը և առաջարկված մեթոդները կարելի է կիրառել հանրակրթական դպրոցում տվյալ թեմաների դասավանդման ժամանակ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ՄԵԹՈԴԻԿԱ

1.1 Գաղափար շարադրության մասին

Գեղարվեստական նյութի գրավոր վերարտադրումը կատարվում է գլխավորապես շարադրությունների միջոցով:Ուստի գրավոր աշխատանքի այդ տեսակը էական նշանակություն ունի գրականության ուսուցման համար:

Շարադրություններ գրելիս նյութը նախ համակարգվում է, հետո՝ գրվում:Ընդ որում այդ պահին ոչ միայն միտքն է լարվում, ուշադրությունը կենտրոնոնում, այլև կարդալու, դիտելու, լսելու և խոսելու ընթացքում ստացվող տպավորություններին միանում է նաև շարժողական կամ մոտորական տպավորությունը:Դրա հետևանքով նյութն ավելի ակնառու, կարգավորված տեսք է ստանում և հաստատապես ամրակայվում է ու մտապահվում հիշողության մեջ:

Այնուհետև շարադրություններ գրելիս աշակերտը կատարում է բազմազան աշխատանք:Նա նյութը փոփոխման է ենթարկում, ավելացնում է, կրճատում, մեկնաբանում է, կշռադատում, ծանրութեթև անում, իր սեփական միտքը, խոհերն ու ապրումները արտահայտում և այլն, կարճ՝ մտածում է, դատում, երևակայում ու ստեղծագործում:Դրա հետ միաժամանակ շարադրություն գրելիս աշակերտն ակտիվացնում է իր բառապաշարը, գտնում ու գործածում գեղեցիկ բառեր, թևավոր խոսքեր, պատկերավորման ու արտահայտչական միջոցներ, ձգտում է ամեն կերպ հղկել ու կոկել, իմաստալից ու գեղեցիկ դարձնել իր խոսքը:Եվ դա շարադրություն գրելիս աշակերտին լավ է հաջողվում, որովհետև այդ միջոցին նա ավելի լայն հնարավորություն է ունենում, քան բանավոր վերապատմման կամ շարադրման ընթացքում:

Այսպիսով՝ շարադրությունը մեծապես նպաստում է աշակերտների ձեռք բերած գիտելիքների, ունակությունների ու հմտությունների ամրակայմանն ու գործնական կիրառմանը, զարգացնում է նրանց մտածողությունը, խոսքը, գեղագիտական

ճաշակը, ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը:

Շարադրության հիմնական տեսակներն ուսուցանվում են նաև տարրական դասարաններում, իհարկե, կրտսեր դպրոցականների տարիքին ու զարգացման մակարդակին համապատասխան: Ահա հենց այդ աշխատանքն է, որ շարունակվում, խորացվում ու ընդլայնվում է միջին դասարաններում:

Գրականության ուսուցման ընթացքում շարադրության բոլոր տեսակներն էլ տրվում են երկու նկատառումով՝ մի բան սովորեցնելու և նրա յուրացումը պարզելու նպատակով:Սովորեցնելու նպատակ հետապնդող շարադրությունը կոչվում է ուսուցանող, իսկ սովորածի յուրացումը պարզելու նպատակ ունեցող շարադրությունը կոչվում է թեմատիկ:

Առաջինը գրվում է թե՛ տանը և թե՛ դասարանում, երկրորդը՝ միայն դասի ժամանակ:Այնուհետև ուսուցանող շարադրությունը տրվում է ավելի շատ և ավելի շուտ, քան թեմատիկ շարադրությունը:

1.2 Շարադրության տեսակները

Շարադրության տեսակները, սերտորեն կապվելով միմյանց հետ, կազմում են մի կուռ, ամբողջական համակարգ:Եվ այդ համակարգի ողջ էությունն այն է, որ նրանում շարադրության տեսակները տրվում են որոշակի հաջորդականությամբ, հարաբերակցությամբ ու փոխկապակցությամբ:

Շարադրությունը լինում է երկու տեսակ՝ ստեղծագործական կամ ազատ և թեմատիկ /վերլուծական/:

Ստեղծագործական կամ ազատ շարադրութուն

Ստեղծագործական կամ ազատ շարադրությունները, որ տրվում են ցածր դասարաններից սկսած՝ դպրոցական գրեթե բոլոր տարիներին, նպատակ ունեն՝

ա/ զարգացնելու աշակերտների մտածական, խոհական, ստեղծագործական կարողությունները, սրելու երևակայությունը

բ/հարստացնելու բառապաշարը

գ/ճիշտ և գեղեցիկ մայրենիով գրավոր վերարտադրելու մտածումները:

Շարադրությունը ստեղծագործական է կոչվում, քանի որ այն ոչ թե որևէ գրական

երկի վերապատմում կամ վերլուծություն է, սովորած գիտելիքների վերարտադրում, այլ իքնուրույն դատողությունների, բնության, կյանքի, մարդկանց մասին աշակերտի պատկերացումների, մտքի ծնունդ խոհերի շարադրում, նրա երևակայությամբ ստեղծված գործ:

Շարադրությունը ազատ է կոչվում, քանի որ աշակերտը ազատ է իր երևակայության, մտքի և դրա շարադրանքի մեջ. նա պարտադրված չէ ի՞նչ ասելու, ինչպե՞ս ասելու հարցում:Ազատությունը սահմանափակվում է միայն նրանով, որ հանձնարարվում է թեմայի վերնագիրը /ասենք՝ <<Գարուն>>, <<Շոգ ամառ>>,<<Մանկությունս հիշելիս…>>, <<Հայրենի լեռներ>> և այլն/:Վերնագրի հանձնարարումը նախանշում է թեմայի ուղղվածությունը, կենտրոնացնում է միտքը:Երբեմն աշակերտին ուղղություն տալու համար, ուսուցողական նպատակներով, արվում են այլ սահմանափակումներ /ասենք՝ տրվում են որոշ բառեր ու դարձվածքներ, որոնք աշակերտը պետք է պարտադիր օգտագործի տեքստում/:

Ազատ շարադրությունները կարող են լինել՝

- Բնութագրական /ասենք՝ որևէ կոնկրետ մարդու՝ մոր, քրոջ, ընկերոջ և այլն, որևէ արվեստի կամ արվեստագետի՝ նկարչի, դերասանի, երգչի բնութագրություն/:

Ինքնուրույն թեմայի շուրջ տրվող բնութագրական շարադրությունը վերաբերում է ոչ թե գրական հերոսների կերպարներին, այլ աշակերտների շրջապատում եղած անձանց, ապրող ու գործող մարդկանց:Ուստի նմանօրինակ բնութագրական շարադրության թեմաները լինում են կոնկրետ և ունենում են խոսուն վերնագրեր, օրինակ՝ <<Մեր սիրելի ուսուցիչը>>, <<Իմ ընկերը>>, <<Մեր անվանի վարպետը>> և այլն:

Ինքնուրույն բնութագրությունը, անշուշտ, ստեղծագործական շարադրության ամենադժվարին տեսակներից մեկն է, ուստի այն հանձնարարվում է ոչ միշտ, ոչ հաճախակի, այլ միայն որոշ դեպքերում ու շատ լավ նախապատրաստումից հետո:Բնութագրական շարադրության նախապատրաստման համար ևս մեծ կարևորություն ունեն դիտումն ու ուսումնասիրումը:Դիտումը կատարվում է

բնութագրվող անձի հետ անմիջական շփման ժամանակ՝ նրան տեսնելիս, լսելիս, նրա հետ խոսելիս, զբաղվելիս:Ուսումնասիրման ժամանակ բնութագրվող անձի վերաբերյալ տեղեկություններ են հավաքվում զանազան աղբյուրներից:

Դիտումն ու ուսումնասիրումը ավարտելուց հետո աշակերտները դասարանում ուսուցչի ղեկավարությամբ ամփոփում, ամբողջացնում են բնութագրվող անձի վերաբերյալ ձեռք բերած տվյալներն ու տեղեկությունները, ապա նրա շուրջ գրում բնութագրական շարադրություն:

 Նկարագրական /ասենք՝ մայրամուտի, արևածագի, լուսամուտից երևացող տեսարանի, բնաշխարհի մի անկյան նկարագրություն/:

Նկարագրական շարադրության համար նյութ են ծառայում բնական երևույթներն ու առարկաները, կենցաղային տեսարանները, աշխատանքային սխրանքները:Այդպիսի շարադրության թեմաները ևս պետք է լինեն պարզ ու կոնկրետ, օրինակ՝ <<Ամառը այգում>>, <<Աշնանային տերևաթափ>>, <<Արևի արշալույսն ու մայրամուտը>>:

Էքսկուրսիան առատ նյութ է տալիս նկարագրական շարադրության համար:Եվ իրոք, նրա ընթացքում աշակերտները դիտում են բազմազան առարկաներ ու երևույթներ, բնության տեսարաններ, մարդկանց աշխատանքային գործունեության զանազան ոլորտներ և կոնկրետ պատկերացում կազմում դրանց վերաբերյալ:

 Վերաբերական /ասենք՝ կարծիք շրջապատում կատարված որևէ դեպքի, կոնկրետ անձնավորությունների արարքների մասին/:

Բոլոր ժամանակներում էլ եղել են ու կան նշանավոր ու անվանի մարդիկ, որոնց կատարած արարքների, նրանց շուրջ կատարված դեպքերի մասին կարելի է հանձնարարել վերաբերական բնույթի շարադրություններ:

Աշակետները ոգևորվում ու ապրում են իրենց մտերիմ, հարազատ մարդկանց կատարած գործերով և սիրով ու հաճույքով հանձն են առնում գրել նրանց անվան հետ կապված դեպքերի ու սխրանքների մասին:

Ուսուցիչը ընտրել է տալիս մատչելի և հետաքրքրական թեմաներ. օրինակ՝ <<ԻՄ քաջ զինվոր>>, <<Սխրանք>>:

 Հուշագրական /անմոռաց, տպավորիչ դեպքեր իր կյանքից/:

Հուշագրական շարադրության համար ուսուցիչը կարող է ընտրել այնպիսի վերնագիր, որ աշակերտները նրա մեջ դնեն տարբեր բովանդակություն. օրինակ՝ <<Իմ կյանքի գլխավոր դեպքը>>: Ինքնին հասկանալի է, որ տարբեր աշակերտներ նույն բանը չեն կարող իրենց կյանքի գլխավոր դեպքը համարել:

 Գրական /վավերագրական կամ հորինովի պատմություն, որի թեման կարող է և՛ ինքնուրույն ընտրվել, և՛ հանձնարարվել/:

Աշակերտների կողմից իրական առարկաների ու երևույթների ինքնուրույն դիտման ու պատկերավոր վերարտադրման, նրանց մտքի ու խոսքի, բնական ձիրքի ու շնորհքի, իքնուրույնության ու նախաձեռնության զարգացման համար շատ կարևոր նշանակություն ունի հորինովի շարադրությունը:

Միջին դասարաններում մեծ տեղ է տրվում գրական-գեղարվեստական բնույթի շարադրությանը, որը նույնպես լինում է պատմողական, նկարագրական և բնութագրական:Պատմողական շարադրությունը աշակերտների համար բավական մատչելի է ու հետաքրքրական:

Ազատ շարադրության գրական /երբեմն նաև հուշագրական/ տեսակը գեղարվեստական մտածողության տարրերի, պատկերավորման միջոցների առկայության դեպքում արդեն ոչ թե շարադրություն է, այլ գրականգեղարվեստական ստեղծագործություն՝ գրական որոշակի ժանրաձևի /պատմվածք, նովել, ակնարկ և այլն/ անվանումով: 8

Ինչպես գրել ստեղծագործական շարադրություն

Ստեղծագործական կամ ազատ շարադրություն գրելը նույնպես /ինչպես ամեն մի գրավոր տեքստ/ պահանջում է որոշ նախապատրաստություն:

Ստեղծագործական շարադրություն գրելը ավելի դյուրին է նրանց համար, ովքեր գրականության դասագրքերի նյութերը լավ են սովորել, հիշում են և կարդացել են լրացուցիչ հանձնարարված գեղարվեստական երկերը:Կարդացած գրականության մեջ նրանք անպայման կհիշեն գործեր, պատմություններ, որոնք ինչ-որ չափով համապատասխանում են հանձնարարված թեմային. Դրանք ինչ-որ չափով կհուշեն, ուղղություն կտան, թե ինչպես գրել շարադրությունը:Այդ գրականությունից նրանք

կհիշեն նաև համապատասխան դարձվածքներ, դիպուկ մակդիրներ, ոճական հետաքրքիր կառույցներ, որոնք կօգնեն մտքերի գեղեցիկ շարադրմանը:

Շարադրությունը գրելուց առաջ նախ՝ մտքում, ապա՝ համառոտ նշումներով անհրաժեշտ է հերթականորեն առանձնացնել թեմայի հիմնական ու մնացյալ հարցերը:Այնուհետև անհրաժեշտ է մտածել շարադրանքի կառույցի մասին՝ ինչպես սկսել և ինչպես ավարտել:

Շարադրության մեջ դեպքերի ու դեմքերի թե՛ արտաքին նկարագրական, թե՛ ներքին՝ հոգեբանական բնութագրումները ավելի տպավորիչ դարձնելու համար հոմանիշների բառարանից կարելի է դուրս գրել համապատասխան բառեր, ընտրել առավել դիպուկը, դարձվածների բառարանից դուրս գրել համապատասխան դարձվածներ և մի քանիսը օգտագործել:

Շարադրելուց հետո՝ որոշ ժամանակ անց, ուշադիր վերընթերցել գրածը. չկա՞ն արդյոք ավելորդ կամ ոչ դիպուկ բառեր, ի՞նչ միտք է մոռացվել:Ուղղումներ անել՝ ջնջելով բառը և, եթե անհրաժեշտ է, նորը գրել:Կարճ լրացումները գրել տողերի արանքում, ընդարձակները՝ լուսանցքում՝ գիծ-սլաքով ցույց տալով ավելացնելու տեղը:Հետևել շարադրանքի լեզվական ճշգրտությանը. արդյոք խառնված չե՞ն գործողության ժամանակները /ներկա, անցյալ, ապառնի/ տարբեր նախադասությունների մեջ, քերականորեն ճի՞շտ են կառուցված նախադասությունները /պարզ նախադասությունների անդամների համաձայնությունը, խնդրառությունը, բարդ նախադասությունների շարադասությունը/: Մեկ անգամ էլ ստուգել՝ չկա՞ն ժարգոնային արտահայտություններ, ուղղագրական և կետադրական սխալներ:

Պետք չէ հատուկ ջանք թափել և ավելորդ <<սիրուն>> բառերով, երկարաշունչ, խճողված դերբայական դարձվածներով կամ բազմաբարդ նախադասություններով շարադրանքի լեզուն իբրև թե <<գեղեցկացնել>>:Գեղեցիկը պարզ մտածողությունն է, սահուն, ոչ երկարաշունչ նախադասություններով, դիպուկ, բնութագրական բառերով շարադրանքը:

Վերլուծական շարադրություն

Միջին դպրոցում աշակերտներին երբեմն կարելի է հանձնարարել իրենց կարդացած գրական տեքստը վերաշարադրել, երբեմն էլ՝ կարդացած նյութի <<հերոսին>> գրավոր բնութագրել:Ավագ դպրոցում, երբ ուսումնասիրում են հայ գրականության համակարգված պատմությունը, կարելի է հանձնարարել գրել գրողների կյանքի ապրած ժամանակաշրջանի և հիմնական ստեղծագործությունների մասին վերլուծական շարադրություններ:

Այս բնույթի շարադրությունների նպատակը մի կողմից գրականության պատմության մեջ գրողի զբաղեցրած տեղի, դերի, ստեղծագործության գաղափարական ու գեղարվեստական արժանիքների մասին դասերի ընթացքում աշակերտների ձեռք բերած գիտելիքների ամրակայումն է, մյուս կողմից՝ ստեղծագործական-վերլուծական կարողությունների զարգացումը, ինչպես նաև, որ շատ կարևոր է, սեփական դատողությունները գրական հայերենով անսխալ գրառելու հմտության ձեռքբերումը:

Վերլուծական շարադրությունների նյութը գրական երկերն են, սակայն դրանք սոսկ լեզվի ու գրականության ուսուցման միջոց չեն. դրանց օգտակարության շրջանակը շատ ավելի լայն է, քանի որ օգնում են աշակերտին՝ հստակ ու որոշակի կառույցով ձևակերպելու և շարադրելու իր մտածածը, ընդհանրապես՝ տարբեր առարկաներից, բազմազան բնագավառներից իրեն առաջադրված հարցերի շուրջ ինչպես դպրոցում, այնպես էլ հետագայում՝ բուհում, աշխատանքի ընթացքում:

Ինչպես գրել վերլուծական շարադրություն

Գրական որևէ թեմայով /որևէ գրողի ամբողջ կամ ոևէ գործի, մեկ կամ մի քանի կերպարների մասին/ վերլուծական շարադրություն գրելիս վերլուծությունը պետք է կատարել փաստական նյութի հիման վրա՝ տեղեկատվություն – վերլուծություն – արժեքավորում ընթացքով:

Շարադրությունը պետք է կառուցել հետևյալ հարցերի պատասխանների

հաջորդականությամբ:

1/ Ո՞ր դարի ո՞ր տասնամյակներում է ստեղծագործել այդ գրողը:

2/Որո՞նք են նրա առավել կարևոր գործերը:

3/Ո՞ր թվականին կամ գրողի ստեղծագործական ո՞ր շրջանում է գրվել վերլուծվող երկը:

4/Ի՞նչ նյութ է բովանդակում այդ ստեղծագործությունը:

5/Այդ նյութը ո՞ր ժամանակի, ի՞նչ իրադարձությունների մասին է, ո՞ր դարի դեպքերն են պատկերված և ո՞ր պատմիչի վկայությունների հիման վրա /եթե նյութը պատմություն է/:

6/Երկի համառոտ սյուժեն:

7/Ո՞րն է այդ երկի /բանաստեղծական շարքի/ գլխավոր գաղափարը. ի՞նչ է ուզում հաստատել կամ ժխտել հեղինակը:

8/Գեղարվեստական ի՞նչ միջոցներով /կերպարներ, գործողություններ, գեղարվեստական հնարանքներ, պատկերավորման միջոցներ/ է դրսևորվում այդ հիմնական գաղափարը. գլխավոր կերպարների բնութագիրը՝ բնավորության հատկանիշները՝ օրինակներով:

9/Գլխավոր գաղափարներին զուգահեռ ուրիշ ի՞նչ խնդիրներ են արծարծված:

10/Ամփոփում՝ մի քանի նախադասությաբ. Այդ երկի /երկերի, շարքի, թեմայի/ տեղը հեղինակի ստեղծագործությունների մեջ և, եթե հիմք է տալիս, նրա տեղը գրականության պատմության մեջ:Այդ արժեքավորումը կարելի է գնահատել այլ գրողների, մշակույթի նշանավոր գործիչների կարծիքներով:

Շարադրության նվազագույն ծավալը 4-5 էջն է՝ սովորական ձեռագրով:

Պետք է խուսափել կաղապարված նախադասություններով, վերացական, ընդհանուր արտահայտություններից, մանավանդ ճոռոմ, վերամբարձ մակդիրներով ու համեմատություններով <<համեմված>> իբրև թե <<գեղեցիկ>> սկիզբներածականներից և ընդհանրապես նմանատիպ շարադրանքից:Որքան հնարավոր է, խոսքը պետք է լինի պարզ, բնութագրող, բայց քիչ ածականներով:

Լավ տպավորություն են թողնում շարադրությունների դիպուկ բնաբանները:

Բանաստեղծների, բանաստեղծության մասին շարադրություններում պետք է

օրինակներով ցույց տալ, բացատրել մտքի կարևորությունը, հույզի, պատկերի գեղեցկությունը՝ խուսափելով հիացական, ոչինչ չասող արտահայտություններից:
Եվ ինչպես բոլոր տեքստերում, շարադրության մեջ նույնպես անհրաժեշտ է հետևել ոչ միայն մտքերի, այլև խոսքի լեզվական կառույցին՝ ժամանակների նույնությանը, համաձայնությանը, ինչպես նաև ուղղագրությանն ու կետադրությանը:

Դասի նմուշօրինակ

Դասի թեման- Գրել համեմատության և հակադրության շարադրություն
Դասի նպատակը-ա/Գրավոր կապակցվող խոսքի զարգացում
բ/Աշակերտների պատկերավորման մտածողության
զարգացում
գ/գեղեցիկը, օգտակարը տեսնելու, ճաշակ ձևավորելու
զարգացում
դ/համեմատելու կարողություն
Հմտությունները զարգացնող նպատակներ՝
 գրավոր խոսքը միասին պլանավորելու, ծրագրելու և շարադրելու կարողությունների զարգացում
 համագործակցելու միջոցով իմացածն ընկերոջը հաղորդելու կարողությունների ձևավորում
Ուսումնական նյութեր՝
 ընտրված նկարի դիտարկում
 բանալի բառեր
Դասի ընթացքը
Աշակերտների հետաքրքրությունը շարժելու, ուշադրությունը կենտրոնացնելու համար ուսուցիչն առաջարկում է դիտել նկարը:
Ի՞նչ եմ տեսնում Ի՞նչ եմ զգում Ի՞նչ եմ լսում Գեղեցիկը բնության
մեջ, թե՞ քաղաքում

Դասարանը բաժանել խմբերի և առաջարկել մտածել տրված հարցերի շուրջ:Աշակերտները նախ աշխատում են առանձին, հետո՝ միասին:Ապա խմբերից մեկական աշակերտ ներկայացնում են իրենց գրածը, հետո համատեղ ուժերով փորձում են գրել շարադրություն նկարի շուրջ:Պահանջվում է՝ որքան հնարավոր է պատկերավոր խոսք կառուցել, գրել հատկապես երևակայական զգացողությունների մասին:

Խմբերի շարադրությունները լսելուց հետո ուսուցիչն առաջարկում է մեկ անգամ ևս խմբագրել իրենց գրածը և արտագրել տետրերում:

Դասի ընթացքում օգտագործած մեթոդները՝ խմբային աշխատանք, <<Քառաբաժան>>, <<Վեննի դիագրամ>>

Միջառարկայական կապերը՝ նկարչություն, բնագիտություն

Տնային աշխատանք՝ Դուրս բերել տեքստից մակդիրները, համեմատություններն ու փոխաբերությունները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ:ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ՄԵԹՈԴԻԿԱ

2.1 Գաղափար փոխադրության մասին

Աշակերտների գրավոր խոսքի զարգացման լավագույն միջոցներից մեկը փոխադրությունն է:Փոխադրությունը խոսքի, լեզվի ինքնուրույն վերարտադրման առաջին աստիճանն է, միջանկյալ օղակ թելադրության և շարադրության միջև:Փոխադրություն գրելիս աշակերտները վերարտադրում են գրական որևէ ստեղծագործության բովանդակությունը:Եվ դա փաստորեն մի տեսակ կամուրջ է դառնում անցնելու ինքնուրույն վերլուծական-քննադատական բնույթի շարադրությունների:Այդ է հիմնական պատճառը, որ փոխադրություններն ավելի շատ տրվում են ցածր դասարաններում, երբ աշակերտները դեռևս դժվարանում են ինքնուրույն շարադրություններ գրել:

Ինչպես գրել փոխադրություն

Ուսուցիչը կարդում է որևէ փոքր պատմվածք, դիպաշարային /սյուժետային/ պատմություն, և աշակերտը հիշողությամբ այն վերարտադրում է գրավոր:Լսած

պատմությունն առանց ավելացումների գրի է առնում:Հասկանալի է, նա չի կարող նախադասություն առ նախադասություն, նույն կառուցվածքներով վերհիշել ամբողջ տեքստը, նաև նոր դրվագներ ու մտքեր էլ ավելացնելու իրավունք չունի:Նշանակում է՝ նա ազատ է միայն բառերի և նախադասությունների կառուցվածքների ընտրության մեջ:Փոխադրության նպատակը տեքստը առանց աղավաղման վերապատմելն ու քերականորեն ճիշտ շարադրելն է:Թելադրության հիմնական պահանջներին այստեղ ավելանում է տեքստում չեղած, իր իսկ կողմից ավելացված բսռերը ճիշտ գրելու , ապա, որ էականն է , ինքնուրույն ճիշտ նախադասություններ կազմելու, խոսքի շարահյուսական կանոնները /պարզ նախադասության անդամների հարաբերություն, բարդ նախադասության կառուցվածքներ, տրոհում և կետադրություն/ պահպանելու խնդիրը:

2.2 Փոխադրության տեսակները

Փոխադրությունները լինում են ուսուցանող և թեմատիկ:

 Ուսուցանող փոխադրութուն

Ուսուցիչը նախօրոք տանն ընտրում է փոխադրության նյութը, տեղեկանում գրողի կյանքի և գործի մասին, իր աշխատանքային տետրում դուրս է գրում անծանոթ բառերը, բառարանով գտնում դրանց բացատրությունը կամ հոմանիշները:Եթե առաջարկվում է լսել երաժշտություն կամ ցուցադրել որևէ կտավի վերատպություն, դրանք ևս պատրաստում է և այդպես ներկայանում դասարան:

Ուսուցիչը գրատախտակին գրում է փոխադրության վերնագիրը:Աշակերտներին խնդրում է պատրաստել սևագրության տետր և գրիչ:Նպատակահարմար չէ փոխադրությունը միանգամից գրել տետրերում, որովհետև նախ՝ երեխային զրկում ենք իր գրածը մշակելու հնարավորությունից, ապա՝ նրան վարժեցնում ենք անփույթ ու ջնջումներով գրելուն:

Այնուհետև ուսուցիչը մեկ-երկու բառով ներկայացնում է տվյալ հեղինակին:Իսկ եթե նախօրոք հանձնարարել է որևէ աշակերտի հաղորդումով հանդես գալ, ապա

լսում են նրան:Հետո ուսուցիչը արտահայտիչ և գեղեցիկ կարդում է բնագիրը:Կարդալուց հետո տեղեկանում է՝ նյութը դուր եկա՞վ աշակերտներին կամ ինչ հասկացան:Բացատրում է բոլոր անծանոթ բառերը՝ գրել տալով բառատետրում:

Հաջորդ փուլը խմբովին հարցաշար կազմելն է:Ողջ դասարանով կազմում են հարցաշար և գրում գրատախտակին:Ուսուցիչը բնագիրը կարդում է երկրորդ անգամ, որից հետո գրատախտակին գրում են օգնող բառեր և բառակապակցություններ, նշվում է այս կամ այն բառի հոմանիշը կամ համարժեք դարձվածքը:Ապա ըստ հարցաշարի կետերի, օգտագործելով սովորած բառերն ու բառակապակցությունները, բանավոր վերարտադրում են նյութի բովանդակությունը:Ուսուցիչն այս աշխատանքին մասնակից է դարձնում բոլոր աշակերտներին:<<Դու ի՞նչ կասես, դու ինչպե՞ս կպատմես այս հատվածը>>-հաճախ դիմում է ուսուցիչը աշակերտներին:

Հատված-հատված պատմելուց հետո ուսուցիչը երկու կամ երեք աշակերտի խնդրում է պատմել ողջ նյութը՝ գործածելով անհրաժեշտ բառերն ու բառակապակցությունները:

Այնուհետև սկսվում է ինքնուրույն աշխատանքի փուլը:Աշակերտներն սկսում են աշխատել սևագրության տետրերում:Եթե դասարանը թույլ է, ուսուցիչը բարձրաձայն կարդալ է տալիս մեկ-երկու աշակերտի գրած առաջին հատվածը, ուղղումներ է անում, իսկ ինքն էլ շրջում է, պատասխանում հարցերին, հիշեցնում, կանխում ուղղագրական և կետադրական սխալները:

Եթե սևագրության մեջ աշխատանքն ավարտվում է, ուսուցիչն առաջարկում է աշակերտին մտքում կարդալ գրածը, ստուգել, ապա թույլ է տալիս արտագրել ուսուցողական աշխատանքի տետրում:

 Թեմատիկ փոխադրություն

Թեմատիկ փոխադրության ժամանակ ուսուցիչն աշխատում է քիչ միջամտել, հարցաշար, օգնող բառեր, բառակապակցություններ չտալ:Իսկ եթե ցածր դասարան է, կամ աշակերտները դեռևս ինքնուրույն գրելու փորձառություն չունեն, ուսուցիչը կարող է օգնել կազմելու հարցաշար, մեկ-երկու աշակերտի

կազմել է տալիս և ապա հանձնարարում սևագրել, ստուգել գրածը և արտագրել տետրերում:

 Ստեղծագործական փոխադրություն

Ուսուցիչը վերնագրի տակ նշում է տեսակը, կարդում է փոխադրության նյութի տրված հատվածը, ապա հանձնարարում, որ աշակերտները ստեղծագործեն ու հորինեն շարունակություն և ավարտ:Լավ կլինի, որ ուսուցիչը չկասեցնի աշակերտի երևակայության թռիչքը, չվախենա առանձին աշակերտների՝ առաջին հայացքից անհեթեթ թվացող հորինվածքներից: Հաճախ մյուս աշակերտներն էլ խիստ ոգևորվում են իրենց ընկերոջ գյուտից և փորձում նրան գերազանցել:Եթե դասարանը դեռ սովոր չէ այսպիսի աշխատանքի, կարելի է խմբովին հորինել. Մի աշակերտ մի միտք է տալիս, մյուսը շարունակում է, երրորդը՝ լրացնում և այլն:

Այս դեպքում, քանի որ ուսուցիչը հարցաշար, օգնող բառեր և բառակապակցություններ չի տալիս, աշակերտներին առաջարկում է իրենց մտքերը հղկել, հարստացնել անհրաժեշտ բառերով, պատկերավոր արտահայտություններով:

 Անավարտ փոխադրություն

Ուսուցիչը կարդում է այսպիսի նշում ունեցող փոխադրության բնագիրը և աշակերտներին հանձնարարում գտնել համապատասխան վերջաբան:Լավ կլինի, որ ավարտը լինի հանկարծակի, անսպասելի և սրամիտ:

 Ստեղծագործական հավելումներով փոխադրություն

Նյութը վերնագիր չունի, չի տրվում հարցաշար, չկան առաջադրանքներ:Բնագիրն ամբողջական չէ, տրված է ընդհատումներով:Աշակերտն ուսուցչի օգնությամբ ընտրում է վերնագիր, փորձում է յուրովի, ստեղծագործաբար լրացնե լբնագրի բաց թողնված հատվածները:

 Անվերնագիր փոխադրություն

Վերնագիրը չի տրվում. տրվում է ողջ բնագիրը, վերջում՝ պլան և

առաջադրանքներ:Ուսուցիչը կարդումէ բնագիրը և առաջարկում աշակերտներին գտնել համապատասխան վերնագիր:Այստեղ ևս ուսուցիչն աշխատում է զարգացնել աշակերտների մտածողության ինքնատիպությունը և նախաձեռնելու կարողությունը:

 Ստեղծագործական մուտքով փոխադրություն

Բնագիրն ունի վերնագիր, սակայն բացակայում է մուտքը:Նյութը շարադրված է առանց անհրաժեշտ սկզբի:Այս դեպքում էլ աշակերտը հորինում, ընտրում է համապատասխան մուտքը, որը բխելու է տրված բնագրի բովանդակությունից:

 Ինքնուրույն հանգուցալուծումով փոխադրություն

Բնագիրը շարադրված է մինչև դեպքերի զ զարգացման գագաթնակետ, իսկ հանգուցալուծումը պիտի տա աշակերտը;Այստեղ պլանի մի քանի կետ տրվում է, մյուս մեկ-երկու կետերը ամեն աշակերտ ինքն է ավելացնում՝ ելնելով իր իսկ հանգուցալուծումից:

 Գրական դատ-փոխադրություն

Այսպիսի փոխադրությանը նախորդում է տվյալ թեմայով անցկացվող գրական դատը:Ուսուցիչը դասարանում կարդում է բնագիրը:Ապա ընտրում են դատավոր, դատապաշտպան, մեղադրող, վկաներ և այլն:Կազմակերպվում է դատ, գրական դատ:Հաջորդ օրը աշակերտները շարադրում են նյութը՝ ըստ այդ գրական դատի:Աշակերտների շարադրանքի մեջ տեղ կգտնեն իքնուրույն դատողություններ, վերլուծություններ, հերոսների բնութագրումներ և այլն:

 Դատողական-ստեղծագործական փոխադրություն

Ուսուցչի՝ նյութը կարդալուց հետո աշակերտները բանավոր վերարտադրում են բովանդակությունը՝ նշելով միայն դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը:Իսկ հետո արդեն ինքնուրույն՝ աշակերտը շարադրանքի մեջ ներմուծում է նաև իր դատողությունները այս կամ այն հերոսի որևէ արարքի կամ տվյալ երևույթի, անցքի վերաբերյալ:Այսինքն՝ աշակերտը դատում է և շարադրում իր տեսակետները տվյալ հարցի շուրջ:

Դասի նմուշօրինակ

Ներկայացնենք փոխադրության դասի մի օրինակ:

Թեմա՝ «Սիրո օրենքը»

Նպատակները՝

1. ակադեմիական

ա. բառապաշարի հարստացում

բ. կապակցված խոսքի զարգացում

գ. գրավոր խոսքի զարգացում

2. սոցիալական

ա. աշակերտների ստեղծագործական կարողությունների և երևակայության զարգացում

բ. գրական ճաշակի ձևավորում

գ. ինքնուրույնության զարգացում

դ. համագործակցային հմտությունների զարգացում

ե. մարդկային արժանապատվության գիտակցության ձևավորում

Դասարանի կահավորումը՝ նկարներ, լուսացրիչ (պրոյեկտոր), ձայնագրիչ, պաստառ՝ վրան գրված Ե. Չարենցի խոսքերը.

Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու,

Քեզ միայն քո յարն է վառել, քա~նի յարեր վառել ես դու…

Դասի տևողությունը՝ 2 դասաժամ

Դասի ընթացքը.

1. Խթանման խուլ. Հնչում է Սայաթ-Նովայի սիրային երգերից, լուսացրիչով ցուցադրվում է «Սայաթ-Նովա» ֆիլմից հատված:

Օգտագործում ենք «Պրիզմա մեթոդը»՝ «Սեր» մեկնաբառով: Երեխաները գուշակում են, որ փոխադրության թեման Սայաթ-Նովայի սիրո մասին է:

Վերնագիրը գրում ենք գրատախտակին:

2. Իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանում ենք 4 խմբի (թղթերի

վրա գրված է Սայաթ-Նովայի բանաստեղծություններից տողեր, և ըստ բանաստեղծության վերնագրերի՝ ձևավորվում են խմբերը):

Օգտագործում ենք «Եռամաս օրագիր» մեթոդական հնարը: Յուրաքանչյուր խմբին բաժանում ենք թերթիկներ՝ 3 սյունակով

(2 խմբին լրացուցիչ բաժանում ենք բառարան-թերթիկ, որտեղ գրված են հատվածի բարբառային բառերի բացատրությունը)

I Խումբ

Թիֆլիսի բարբառ Գրական

արևելահայերեն

Մեկնաբանություն

-Ձեռը վի կալ, վատ

մարթութին չի՛մ ուզում,

Յիս մարդ մարթիմ,

նամարդութին չի՛մ ուզում,

Աղուհացիտ ախպերութին

չիմ ուզում:

II Խումբ

Անծանոթ գրական բառեր Բառերի

նշանակություն

Կիրառություն

Ձեփյուռ, զեխ, արբշիռ, սքեմ,

պարեգոտ, վեղար, գինարբուք

և այլն:

III Խումբ

Թիֆլիսի բարբառ Գրական

արևելահայերեն

Մեկնաբանություն

Ամեն մարթ չի կանա կարթա,

իմ գիրն ուրի՛շ գրեն է, Ամեն

մարթ չի կանա խմի, իմ ջուրն

ուրիշ ջրեն է, Բունիաթս

ավազ չիմանաս, քարա՛փ է,

քարուկրեն է…

Հարցեր Պատասխան Նոր

տեղեկություններ

IV Խումբ

1. Ով է Սայաթ-Նովան:

2. Ինչու էր Հերակլը նրան

վտարել պալատից:

3. Ում էր սիրում ՍայաթՆովան:

4. …և այլն:

Հաջորդ քայլին յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչը կարդում է «օրագիրը»: Նոր խմբեր են ձևավորվում, և յուրաքանչյուր խմբի բաժանում ենք հատվածներ: Նյութը բաժանում ենք 4 մասի (Նազարյան Ռ., Ալեքսանյան Թ., փոխադրության նյութերի ժողովածու, 4-10 – րդ դասարանների համար, Եր., «Զանգակ 97»2000):

I. Հատված- «Սկզբից _____ ...նրան վերադարձրին պալատ»:

1. Այս հատվածի ընթերցումից ինչ պարզվեց, ինչ եզրակացության եկաք, և որ տողերից արեցիք ձեր հետևությունները:

2. Ուշադրություն դարձրեք հետևյալ տողերին.«Իմացի՛ր, սրտի վրա ծանրացած մեղքը քավելու համար քեզ թավադություն է շնորհել»:

Ձեր կարծիքով՝ ինչ միտք էր դա:

II. Հատված- «Սայաթ՛,- ասած Հերակլը,-, դու գիտես, որ… _____ … արցունքներ քամու նրանց աչքերից»:

1. Ընտրե՛ք համապատասխան երաժշտություն այս հատվածի համար:

2. Ինչ եք կարծում, ինչու Սայաթ-Նովան համաձայնեց գնալ պալատ:

III. Հատված- «Բայց չգիտեր բանաստեղծը _____ … Մինչև մահ-գերեզման»:

1. Ձեր աչքին ինչ գույնով է պատկերանում տվյալ հատվածը կամ ինչ գույնով կներկեիք այն:

2. Նկարագրե՛ք դեպքերի հաջորդական զարգացումը:

IV. Հատված- «Տրտում լսեց Սայաթ-Նովան…վերջին տողը (Դա Սայաթ-Նովան էր)»:

1. Ձեր կարծիքով՝ որն է այս հատվածի ամենկարևոր նախադասությունը. Ինչի հաստատումն է դա:

2. Ինպես եք պատկերացնում պատմության վերջը:

Պահանջում ենք կարդալ և ուշադիր պատասխանել հատվածի ներքևում տրված հարցերին (գրավոր կամ բանավոր): Օգտագործում ենք «Կանխագուշակումների աղյուսակ» մեթոդը (4-րդ խմբի հատվածը թողնում ենք անավարտ):

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ:ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ:

Շարադրության և փոխադրության նախապատրաստումն ու անցկացումը գործի մի կողմն է, մյուս կողմը նրա ստուգումն է ու քննարկումը:Իսկ ո՞րն է այդ աշխատանքի հիմնական խնդիրը:

Ստուգման ու քննարկման ընթացքում տեղի են ունենում սխալների բացահատում, ուղղում, կրկնման կանխում, ինչպես նաև դրանց ունեցած արժանիքների վերհանում, դրական կողմերի մատնանշում և ամրակայում, կատարվում են պակասավոր կողմերի վերացում, աշակերտների խոսքի զարգացում:Այս ամենը ստուգման և քննարկման ամենահիմնական խնդիրն է համարվում:

Ստուգման ժամանակ նշվում, ուղղվում ու խմբավորվում են բոլոր սխալները:Թեպետ դրանք շատ բազմազան են լինում, բայց պայմանականորեն կարելի է բաժանել երկու կարգի՝ բովանդակությանը և նրա լեզվին վերաբերող սխալներին:

Երբեմն թեման, թեպետ ընդգրկվում է ամբողջովին, բայց պլանի առանձին կետեր չեն տրվում ճիշտ փոխկապակցությամբ ու հարաբերակցությամբ:Կամ պլանի որոշ կետեր տրվում են մանրամասնորեն, իսկ որոշ կետեր էլ՝ մակերեսորեն, որի հետևանքով նյութի տարբեր բաղադրամասերի միջև չի ստեղծվում ներդաշնակություն:

Շարադրության և փոխադրության ստուգման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն ողղագրական և կետադրական, այլև ոճական սխալներին:

Գրավոր աշխատանքների ստուգումից հետո անհրաժեշտ է կատարել դասարանային քննարկում:Ուսուցիչը նշում է գրավորն աշխատանքների արժանիքները, խմբավորում ուղղագրական, կետադրական ու լեզվաոճական սխալները, կանխորոշում դրանց վերացման միջոցները:

Քննարկման վերջում ուսուցիչը, կատարելով ամփոփում, աշակերտներին տնային առաջադրանքներ է հանձնարարում գրավոր աշխատանքների մեջ եղած սխալների ուղղման ու կանխման, դրանց ուսանելի ու արժեքավոր կողմերի ամրակայման և հաջորդ գրավոր աշխատանքի սկզբնական նախապատրաստման համար:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ:ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մանկավարժության մեջ ստուգումը և գնահատումը որակավորող գործողություններ լինելուց բացի աշակերտի մտածողությունը խթանող բազմաբնույթ աշխատանքներ են, որոնք հիմնավոր պայմաններ են ստեղծում նաև ինքնագնահատման ու ինքնարժևորման համար:Որպե օրինակ ներկայացված է գնահատման մի սյունաշար /ռուբրիկ/, որը կազմվել է գրավոր շարադրանքի գնահատման համար:

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

9-10	6-8	3-5	1-2
Առաջադրված թեմային առնչվող մեկ հետաքրքիր դրույթի ինքնուրույն ընտրություն և մեկնաբանություն՝գրավոր շարադրանքով	Առաջադրված թեմայինառնչվող, ուսուցչիօգնությամբ ընտրված մեկ դրույթիմեկնաբանություն՝ գրավոր շարադրանքով	Առաջադրված թեմային առնչվող,ուսուցչի կողմից Հանձնարարված դրույթի ներկայացում/պարզ վերարտադրություն/՝ գրավոր շարադրանքով	Բացակայում է դրույթի հստակ ձևակերպումը
Դրույթի պաշտպանությանհամար անհրաժեշտ առնվազն հինգ հաստատող փաստարկի գրավոր ներկայացում՝ հաշվի առնելով հիմնական հակափաստարկներ	Դրույթի պաշտպանության համար անհրաժեշտ առնվազն երեք հաստատող փաստարկի գրավոր ներկայացում	Դրույթի պաշտպանություն՝ մեկ-երկու փաստարկով	Չեն բերվում հստակ փաստարկներ՝ հօգուտ դրույթի
Շարադրանքի հստակ կառուցվածք. -ներածություն -հիմնական մաս -ամփոփում	Շարադրանքի կառուցվածքի պահպանում. -ներածություն -հիմնական մաս -ամփոփում	Շարադրանքի կառուցվածքի պահպանում. -ներածություն -հիմնական մաս -ամփոփում	Պահպանված չէ շարադրանքի կառուցվածքը. -ներածություն -հիմնական մաս -ամփոփում
Քերականական, ուղղագրական սխալների իսպառ բացակայություն,	Քերականական, ուղղագրական սխալների բացակայություն	Քերականական, ուղղագրական սխալների դեպքերի, վայելչագրական	Կան ջնջումներ, քերականական և

վայելչագրական նորմերի հստակ պահպանում	վայելչագրական նորմերի պահպանում՝ աննշան թերություններով	նորմերի պահպանում՝ որոշ թերություններով	ուղղագրական կոպիտ սխալներ
Ծավալը՝ յոթ էջից ոչ պակաս, ինը էջից ոչ ավել	Ծավալը՝ 5-7 էջ	Ծավալը՝ 3-5 էջ	Ծավալը 3 էջից պակաս է

Ըստ ռուբրիկի կիրառման կարգի՝ աշակերտը նախապես առաջադրանքի հետ միասին ստանում է գնահատման չափանիշները, որոնք միաժամանակ նրա համար դառնում են նաև աշխատանքի կատարման ուղեցույց:

Ռուբրիկը՝ որպես գնահատման ձև, ունի մի շարք առավելություններ.

- Օգնում է ուսուցչին և աշակերտին փոխհամաձայնությամբ կենտրոնանալ ուսումնական կոնկրետ հարցերի վրա:
- Կազմվում է այնպես, որ աշակերտը, առաջադրանք կատարելով, արդյունքում ստանում է որոշակի տեղեկություններ իր ուսումնառության մասին:
- Հստակեցնում է թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի ակնկալիքները:
- Օգնում է աշակերտին հասկանալու գնահատականի իմաստը:

Եզրակացություն

Գրավոր աշխատանքների մշակման միջոցով ուսուցիչը սովորողների մեջ զարգացնում է տրամաբանական մտքի շարադրանք, գեղագիտական հմտություն, երևակայություն և դրանց բազմաբովանդակ առնչություններն ընկալելու ինքնատիպ մոտեցում:Լեզուն անգնահատելի դեր է կատարում մարդու ձևավորման հարցում, օգնում կյանքի, մարդկային հարաբերությունների, գաղափարների, զգացմունքների պատկերավոր արտացոլմանը, որոնց իրագործումը կախված է նաև գրավոր դասերի ճիշտ կազմակերպումից ու անցկացումից:

Սովորողներին ի վերջո պետք է հասցնել այն ճշմարտությունը, որ լեզուն հաղորդակցման միջոց է և միաժամանակ մտածողության գործիք: Լեզուն սիրտ է ու հոգի, լեզուն մարդու էությունն է ու էության ինքնադրսևորումը:Լեզուն գալիս է մարդու արյան հոսքի հետ, այն պիտի գնա, շարունակվի ազգի հետնորդների մեջ:Լեզու կորցնելը միայն լեզու կորցնել չէ, լեզվի հետ կորչում է նաև ազգը:

Օգտագործված գրականության ցանկ

Վազգեն Գաբրիելյան -Գրավոր խոսք, Երևան 2007

Թ. Գ. Ջուհարյան-Հայ գրականության մեթոդիկա, Երևան 1980

Ա. Վ. Գրիգորյան-Ստեղծագործական շարադրությունների ուսուցման հարցեր, Երևան 1984

Ա. Շ. Դանիելյան – Փոխադրության նյութերի ժողովածու, Երևան 1984

Ռ. Նազարյան, Թ. Ալեքսանյան-Փոխադրության նյութերրի ժողովածու, Երևան 2000

Իրինա Մամունց- <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես,Գնահատումը աշակերտների գրավոր խոսքի զարգացման գործընթացում, Երևան 2015